ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«12» ապրիլի 2010թ. N ---Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ, ԴՐԱՄԱՏՈՒՐԳ, ԵՐԳԻԾԱԲԱՆ ԺԻՐԱՅՐ ԱՆԱՆՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի N 551 որոշումը՝

Երևան քաղաքի ավագանին *որոշում է.*

Տալ համաձայնություն Հայաստանի Գրողների միության անդամ, դրամատուրգ, երգիծաբան Ժիրայր Անանյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Եր. Քոչարի 9 հասցեում տեղադրելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

Նախաձեռնության /որոշման/ հեղինակ
Կրթության, մշակույթի, երիտասարդության հետ տարվող աշխատանքների, առողջապահության, սոցիալական պաշտպանության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի անդամ **Մարիամ Ղազարյան**

ՏԵՂԵԿԱՆՔ–ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ, ԴՐԱՄԱՏՈՒՐԳ, ԵՐԳԻԾԱԲԱՆ ԺԻՐԱՅՐ ԱՆԱՆՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ»

Որոշման ընդունման համար հիմք է հանդիսանում Հայաստանի գրողների միության անդամ, դրամատուրգ, երգիծաբան Ժիրայր Անանյանի ներդրած վաստակը հայ թատերարվեստի բնագավառում:

Հայաստանի գրողների միության վարչության միջնորդագիրը ևս վկայում է, որ Ժիրայր Անանյանը եղել է Հայաստանի լավագույն թատերագիրներից մեկը, որի կատակերգությունները երկար տարիներ բեմադրվել են ինչպես մեր, այնպես էլ արտերկրներում:

Անվանի թատերագիրը իրավամբ համաժողովրդական սեր և ճանաչում ունի:

Հարցը քննարկվել է Երևանի ավագանու կրթության, մշակույթի, երիտասարդության հետ տարվող աշխատանքների, առողջապահության, սոցիալական պաշտպանության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի 2010թ. ապրիլի 1-ի նիստում և քվեարկության արդյունքում անցել միաձայն:

Կրթության, մշակույթի, երիտասարդության հետ տարվող աշխատանքների, առողջապահության, սոցիալական պաշտպանության,ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի անդամ՝ **Մարիամ Ղազարյան**